ԼԻԼԻԹ ՄՈՎՍԵՍՅԱՆ
LILIT MOVSESYAN

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ «ԲՆԱԿԱՎԱՅՐ» ԻՄԱՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բառիմաստային խմբերի (ԲԻԽ) ուսումնասիրության հետ կապված խնդիրները, դրանց կառուցման օրինաչափությունները դիտարկվում են տարբեր հեղինակների բազմաթիվ աշխատություններում (Լ. Վ. Շչերբա, Վ. Վ. Վինոգրադով, Ա. Ի. Սմիրնիցկի, Յու. Դ. Ապրեսյան, Վ. Գ. Գակ, Ա. Ա. Ուֆիմցևա, Յու. Ն. Կարաուլով, Ն. Դ. Հարությունովա, Մ. Վ. Նիկիտինա, Յու. Ս. Ստեպանով, Ե. Ս. Կուբրյակովա, Գ. Բ. Ջահուկյան, Դ. Գյուրջինյան և այլք)։

ԲԻԽ-երին, ինչպես և իմաստային դաշտերին, վերագրվում է անընդմեջություն, քանի որ «բառերի և դրանց նշանակությունների միջև գոյություն ունեն միանգամայն բազմատեսակ կապեր, որոնք կազմում են լեզվի բառիմաստային համակարգը, որը բաց է, շարժուն և զարգանում է՝ հաղթահարելով տարատեսակ հակադրություններ»։

Ֆ. Ֆիլիմը տալիս է ԲԻԽ-ի կառուցման հետևյալ սահմանումը. «Բառերի բառիմաստային խմբերը ներկայացնում են երկու, մի քանի կամ բազմաթիվ բառերի միություն՝ ըստ այդ բառերի բառային իմաստների» (*Филлмор* 1982:226)։

ԲԻԽ-ում բառերի միջև ամենակարևոր հարաբերություններն են *հոմանիշությունը, հականիշությունը և սեռանիշություն-տեսականիշությունը* որպես բառապաշարի համակարգվածության հիմնարար գործոններ։ Վերջիններս դիտարկել ենք նաև «բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ԲԻԽ-ի ուսումնասիրության ժամանակ։

Հայտնի է, որ բառային նշանակության պատկերացումը լեզվաբանության մեջ ձևավորվել է XX դարի կեսին։ Նշանակության հաղորդակցական հայեցակերպի ուսումնասիրությունը իմաստաբանության ոլորտին է պատկանում։

Լեզվաբաններին միշտ էլ հետաքրքրել է, թե ինչ պայմաններում են երկու անուն լեզվում ունենում նույն նշանակությունը։ Գոյություն ունեն այս հարցի մի շարք անբավարար պատասխաններ։ Այս խնդրի լուծման գործնական առաջարկն այն է, որ երկու եզր ունեն նույն նշանակությունը, եթե նույն միտքն են արտահայտում։ Բայց տեսականորեն երբեք չի կարելի պնդել, որ երկու անուն ունեն նույն նշանակությունը, ավելին, պետք է

ճշգրիտ նշել, որ շատ թե քիչ դրանք ունեն նշանակության նմանություն /Nelson Goodman 1952:67/:

Իմաստային հոմանիշները իրար հանդեպ դրսևորում են հետևյալ երեք իմաստային հարաբերություններից մեկը՝ *1. ներառում, 2. փոխատարձ տրամախաչում, 3. նմանության բացակայություն (non-coherence)*

Ուսումնասիրելով հոմանիշությունը՝ որպես բառապաշարի համակարգվածության հիմնարար գործոններից մեկը, այն դիտարկել ենք «բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ԲԻԽ-ի վերլուծության ժամանակ: Առանձնացրել ենք հետևյալ հոմանիշային շարքերը՝

1. ընդհանուր «բնակման վայր» (տուն) իմաստ արտահայտող բառեր

place/building/home/house/lodging/residence/shelter/quarters/accommodation/apartment/barracks/billet/digs/penthouse/domicile/flat/longhouse/pad/tenement/dwelling/rooms/maisonette/abode-տուն/ օթյակ/ օթևան/ կացարան/ բնակավայր/ առանձնատուն/ բնակարան/ յուրդ/ օջախ/

2. «փոքր բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

cottage/ chalet /hut /cabin /shack /lodge/ ւցloo- տնակ/ խրճիթ/ հյուղ/ քողտիկ/ բույն

3.«թագավորական կացարան» նշանակող բառեր

palace/ castle -պալատ/ ամրոց/ դղյակ/ ապարանք/

4. «մահացածների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

grave/ cemetery/ graveyard/ churchyard/ tomb / catacomb/ crypt/ vault-գերեզման/ շիրիմ/շիրմանոց/դամբարան/գերեզմանոց/գերեզմանատուն/հող

5. «կալանավորների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

prison/jail/brig/coop/dungeon/cell/cage--բանտ/գաղութ/բանտախուց/կալանատուն/ կալանավայր/ բերդ/գաղութ/արգելատան/գնդան/

6. «ճանապարհորդողների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

hotel/motel/hospice/inn/caravanserai/hostel--հյուրանոց/իջևան/օթևան/պանդոկ/քարվանսարա

7. «հողատերերի բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

farm/farmhouse/ranch/grange-ագարակ/դաստակերտ/կալվածատուն

8. «հոգևորականների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր

monastery/abbey/cloister/convent/nunnery/retreat-առանձնոց/ճգնարան/մենաստան/ մենաստան/ միանձնանոց

9. «թաքնվելու վայր» իմաստ արտահայտող բառեր

retreat/refuge/harbouring/asylum/shelter/den-թաքուստ/թաքստոց/ապաստան/պատսպարան

10. «անձեռակերտ բնակավայր» *իմաստ արտահայտող* բառեր

den /cave /cavern -քարայր/փապար/ այր/ անձավ/ քարանձավ/խորշ

11. «Ընտանի կենդանիների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր
stable/byre/barn-փարախ/գոմ/ախոռ,

12. «Վայրի կենդանիների բնակավայր» իմաստ արտահայտող բառեր
den/lair- խորշ /քարայր/անձավ/այր:

Ինչպես արդեն նշել ենք, բառիմաստային խմբերում բառային միավորների միջև գործող իմաստային հարաբերություններից է նաև *հականիշությունը*:

Հայտնի է, որ հականիշները լինում են *լեզվական* և *խոսքային*: Լեզվական են այն հականիշները, որոնք անկախ իրենց համատեքստային կիրառությունից, նույնիսկ խոսքային իրադրությունից դուրս արտահայտում են հակադիր իմաստներ և գոյ լեզվական իրողություններ են: Խոսքային մակարդակում հականշություն են ձեռք բերում երբեմն նույնիսկ իրար նկատմամբ հակադրական հարաբերություններ չունեցող բառեր, բառաձևեր և կապակցություններ:

Հետաքրքրական է, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում «բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ԲԻԽ-ում առանձնանում են հակադրության վրա հիմնված բառիմաստային բազմաթիվ ենթախմբեր:

Ակնհայտ հականիշություն է դրսևորվում *hell / heaven* և *դժոխք/դրախտ* բառերում:

Անգլերենում *"hell-heaven"* հակադրությունը կառուցված է հետևյալ հատկանիշների հիման վրա՝

the home of devils - the home of God
bad people - good people

Հայերենում *դժոխք-դրախտ* հակադրությունը արտահայտվում է հետևյալ կերպ՝

մեղավորների հոգիներ - արդարների հոգիներ
մշտնջենական տանջանք - մշտնջենական երանություն

«Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ուսումնասիրության ժամանակ դիտարկվել է նաև հակադրություն՝ պայմանավորված կացարանների բարետեսությամբ և մեծությամբ: Ընդ որում, հետաքրքրական է, որ անգլերենում և հայերենում պատկերը տարբեր է:

- *մեծ և անբարետես կացարաններ* ⟶ *մեծ և բարետես կացարաններ*
  barracks apartment, residence, penthouse - դաստակերտ

Նշենք, որ հայերենում չեն դիտարկվել այնպիսի բառեր, որտեղ միաժամանակ արտահայտված կլինեն *«մեծ» և «անբարետես» կացարաններ* իմույթները:

❖ *մեծ կացարաններ* ——————→ *փոքր կացարաններ*
tenement, skyscraper chalet, cabin, cottage, shack, lodge, igloo
apartment, residence

Հայերենում, ի տարբերություն անգլերենի, «բնակավայր» իմաստ արտահայտող որոշ բառերում միաժամանակ դիտարկվում են «*փոքր*» և «անբարետես» *կացարաններ* իմույթները: Բացառություն է կազմում «*տնակ*» գոյականը, որը դասվում է *փոքր կացարաններ* իմաստ արտահայտող գոյականների շարքին իր առաջին իմաստով՝ 1.փոքր տուն, և *փոքր և անբարետես կացարաններ* իմաստ արտահայտող գոյականների շարքին երկրորդ իմաստով 2. *հյուղ, խրճուկ տուն*:

❖ մեծ և բարետես կացարաններ ——————→ փոքր և անբարետես կացարաններ

penthouse; residence; apartment *hut, shanty*
առանձնատուն, կալվածատուն հյուղ, քոդոխիկ, բույն, տնակ, խրճիթ
պալատ, դաստակերտ

Անգլերենում և հայերենում դիտարկել ենք նաև հակադրություն հետևյալ ենթախմբերի միջև՝

❖ *բնական /անձեռակերտ/ բնակավայրեր* ——→ *արհեստական /ձեռակերտ/ բնակավայրեր (*cave-apartment; քարայր-առանձնատուն)
❖ *մարդկանց բնակավայրեր* ——→ *կենդանիների բնակավայրեր*
(residence-lair; բնակարան-փարախ)
❖ *ընտանի կենդանիների բնակավայրեր* ——→ *վայրի կենդանիների բնակավայրեր* (barn-den; ախոռ-այր)
❖ *ընդհանուր բնակավայրեր իմաստ արտահայտող բառեր կոնկրետ բնակավայրեր իմաստ արտահայտող բառեր*
(town-flat; քաղաք-բնակարան)
❖ *մշտական կացարաններ* ——→ *ժամանակավոր կացարաններ*
(apartment –hostel; բնակարան-հյուրանոց*)*
❖ *արական սեռի բնակիչների կացարան* ——→ *իգական սեռի բնակիչների կացարան* (billet- convent; զորակայք-կանանոց)

«Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների ԲԻՆ-ի իմաստային կարևորագույն հարաբերությունն է նաև *սեռանիշություն/տեսականիշություն*: Սեռանիշության հարաբերությունը յուրահատուկ տեսական նշանակություն ունի ճանաչողական լեզվաբանության մեջ: Այնպիսի հեղինակների աշխատություններում, ինչպիսիք են Ա. Վեժբինցկայան, Է. Լ. Գինզբուրգը, Գ. Է. Կրեյդլինը, Ռ. Մ. Ֆրումկինան և այլք, նշվում է, որ սեռանիշության հարաբերությունները միատեսակ չեն, և փորձ է արվում դուրս բերել այս հարաբերության տարբեր տեսակներ:

Այսպիսով, սեռանիշության հարաբերությունը իմաստային դաշտում հարացուցային հարաբերություն է, երա բաղադրիչների ստորակարգային կազմակերպում՝ հիմնված տեսակի և սեռի հարաբերությունների վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռանիշության երևույթը կարևոր տեղ է զբաղեցնում լեզվի բառային համակարգում և հատկապես տերմինաբանական համակարգում, քանի որ ի տարբերություն այլ իմաստային երևույթների /բազմիմաստություն, հոմանիշություն, հականիշություն/՝ այն բնութագրվում է բառային համակարգի անդամների փոխհարաբերությունների ստորակարգությամբ:

Համաձայն Ի. Աթանասովայի՝ սեռատեսակային հարաբերությունները տեսականիշային շարքում արտահայտվում են իմաստային և ձևաիմաստային: Տեսականիշային հարաբերությունները արտահայտվում են միայն իմաստային կերպով, եթե տեսականիշը և սեռանիշը չունեն ընդհանուր բաղադրիչ՝ արտահայտված արմատով, բառով կամ բառակապակցությամբ[1]:

«Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների քննության ժամանակ առանձնացվել և դիտարկվել են հենց այս երկու վերոնշյալ սեռանիշային հարաբերությունները՝ *1. ձևաիմաստային սեռանիշություն,*
2. իմաստային սեռանիշություն:

Ձևաիմաստային սեռանիշության հարաբերություններ դիտարկվել են ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում: Ուսումնասիրվող լեզուներում ամենամեծ խումբը կազմում են *տուն* և *house* սեռանիշներով կառույցները: Նշենք, որ հայերենում *տուն* սեռանիշով կառույցն ավելի մեծ է և ծավալուն, քան անգլերենում: Անգլերենում դիտարկվել են *house* բաղադրիչով բազմաթիվ օրինակներ, ինչպիսին են *courthouse, firehouse, greenhouse, lighthouse, playhouse, powerhouse, warehouse, boathouse, porterhouse, smokehouse, steakhouse* բառերը, սակայն դրանք չեն արտահայտում մեր կողմից ուսումնասիրվող *բնակավայր* հասկացությունը: Նշենք, որ առանձնացված կառույցներում ընդգրկվել են միայն *բնակավայր* հասկացություն արտահայտող տեսականիշները: Հետաքրքրական է, որ անգլերենում բացակայում են *home* բաղադրիչով ավարտվող և *բնակավայր* իմաստ արտահայտող բարդ բառեր:

[1] http://www.russian.slavica.org/article655.html, 07.12.2010



Հայերենում *քաղաք* բառը դիտարկվում է որպես սեռանիշ, որն ունի երկու տեսականիշ՝ *մայրաքաղաք* և *գյուղաքաղաք*: Նշենք, որ անգլերենում մեզ հետաքրքրող իմաստով բառերի շարքում չի դիտարկվել *city* սեռանիշի տեսականիշներ:

«Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականներում ավելի շատ է դրսևորվել սեռանիշության երկրորդ տեսակը, այն է՝ *իմաստային սեռանիշությունը*: Անգլերենում առանձնացվել են *prison, inn, village, hotel* սեռանիշերը և դրանց իմաստային տեսականիշները՝

prison → *brig /prison in a navy//*
inn → *caravanserai /a large inn//*
village → *hamlet /small village//*
hotel → *1. motel /a hotel for people who are travelling by car*
2. inn /small hotel/

Հայերենում առանձնացվել են *քաղաք, գյուղ, իջևան* սեռանիշերը և դրանց իմաստային տեսականիշերը՝

քաղաք → *ոստան /մեծ ու շքեղ քաղաք//*
գյուղ → *1.գյուղակ /փոքր գյուղ//*
2. ավան /մեծ գյուղ//
իջևան → *քարվանսարա /իջևան ճանապարհի վրա կամ քաղաքում, որտեղ քարավանը և ուղևորները հանգստանում են կամ գիշերում/*
2.պանդոկ /ճանապարհի վրա գտնվող իջևան ուր ուղևորները կարող են օթևան և կերակուր գտնել//

Այսպիսով, *հոմանիշությունը, հականիշությունը և սեռանիշությունը* որպես բառապաշարի համակարգվածության հիմնարար գործոններ, դիտարկվում են բնականաբար, նաև «բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների բառիմաստային խմբում: Ընդ որում, տվյալ բառիմաստային խմբի ենթախմբերից շատերը հիմնված են *հականիշության* վրա, իսկ բառիմաստային խմբերի մեծամասնության ներսում իշխում են հոմանիշության իմաստային հարաբերությունը: Ակնհայտ է, որ վերոհիշյալ իմաստային երեք

հարաբերությունները հիմք են հանդիսանում ԲԻՄ-ի և դրա բազմաթիվ ենթախմբերի լիարժեք ձևավորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ջահուկյան Գ. Բ. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1989
2. Апресян Ю. Д. Лексическая семантика: Синонимические средства языка. "Наука", М., 1974, ст. 168-175
3. Вердиева З. Н. Семантические поля в современном английском языке. // Учебное пособие. М., 1986
4. Кобозева И. М. Лингвистическая семантика. // Учеб. пособие, Эдиториал УРСС, М., 2000
5. Кронгауз М.А. Семантика. Рос. гос. гуманит. ун-т, Москва, 2001
6. Уфимцева А. А. Лексическое значение: (Принцип семасиологического описания лексики).// "Наука", М., 1986
7. Филин Ф. П. О черки по теории языкознания. изд. "Институт научной информации по общественным наукам (ИНИОН) РАН". М., 1982
8. Saeed F. J. Semantics. // Carnwall, Blackwell Publishing, 2003, p. 3-17; 51-71
9. Semantics and the philosophy of language. A collection of readings edited by Leonard Linsky. The University of Illinois press at Urbana, 1952, p.67; 201

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

10. Դովլաթյան Ա. Հոմանիշների և հականիշների բառարան, Երևան, Զանգակ-97, 2002
11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1969-1980
12. Սուքիասյան Ա. Մ. Հայոց լեզվի հոմանիշների բառարան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967
13. Hornby A. S. "Oxford Advanced Learner's Dictionary of Current English", Oxford University Press, Sixth Edition, 2000

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

14. Апресян Ю. Д. Типы соответствия семантических и синтаксических актантов. // Проблемы типологии и общей лингвистики. СПб., 2006
    [http://www.philology.ru/linguistics2/apresyan-06.htm. 15.10.2010*]*
15. Атанасова И. Способы выражения гипонимических отношений (на материале русской и болгарской терминологии изобразительного искусства) Великотырновский университет, Balkan Rusistics, 2004
    [*http://www.slavica.org/russian/article655.html*. 05.10.2010]
16. Вежбицкая А. Семантика, культура и познание: общечеловеческие понятия в культуроспецифических контекстах. Thesis. - Вып. 3. - М., 1993. - С. 185-206,
    [http://www.philology.ru/linguistics1/wierzbicka-93.htm
17. Edmonds Ph., Hirsty G. Near-Synonymy and Lexical Choice Sharp Laboratories of Europe Limited University of Toronto, 1999
    [http://www.philipedmonds.com/papers/Edmonds+Hirst-2002-Near-synonymy.pdf.15.11.2010]
18. Zeng R. Semantic relationships between contextual synonyms Sep. 2007, Volume 4, No. 9 (Serial No. 34) US-China Education Review, ISSN1548-6613, USA
    [http://eyouyoo.blog.163.com/blog/static/161508152007911115775 96/.02.01.2011]